ԲԱԺԻՆ 2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քաղաքականության վերաբերյալ ընդհանուր հայտարարություն

Հանրային Առողջության Վարչությունը հանձնառու է ապահովել, որ բոլոր անձանց հասանելի լինեն ծառայությունները, և նրանք կարողանան օգտվել դրանցից, ինչպես նաև ստանալ տեղեկատվություն իրենց նախընտրած լեզվով: Հանրային Առողջության Վարչությունը գրավոր և բանավոր թարգմանության անվճար ծառայություններ է մատուցում անգլերենի սահմանափակ իմացություն ունեցողներին (LEP), այլ լեզվով՝ ոչ անգլերեն, հաղորդակցվողներին (LOTE) և/կամ նրանց, ում հաղորդակցությունը խաթարված է առողջական խնդրի կամ ծերանալու պատճառով: Տարբեր լեզուներով օժանդակություն և տեղեկատվական աղբյուրներ տրամադրելով՝ մենք խթանում ենք ներառականությունը և նպաստում ենք այնպիսի համայնքի ստեղծմանը, որտեղ բոլորը կարող են ավելի լիարժեք մասնակցել և զարգանալ:

Բ. Քաղաքականության շրջանակը

Հանրային Առողջութան «Լեզվի հասանելիության քաղաքականությունը» վերաբերում է Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջութան աշխատուժին, որի մեջ են մտնում անձնակազմը, պայմանագրով աշխատողները և կամավորները, երբ աշխատում են հաճախորդների և համայնքի շահագրգիռ կողմերի հետ, որոնք ցանկանում են օգտվել Հանրային Առողջության հաստատություններում, ոչ կլինիկական պայմաններում (օրինակ՝ համայնքի հետ շփումներ, հիվանդների կամ հաճախորդների տուն այցեր, հեռաբժշկություն և Հանրային Առողջության կողմից հովանավորվող միջոցառումներ) տրվող Հանրային Առողջության ծրագրերից և ծառայություններից: